



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

... հոկտեմբերի 2017 թվականի №...Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում (այսուհետ՝ Կանոններ), կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.5.1 կետով.

«13.5.1. Կանոնների 13.5 կետում նշված ժամկետների խախտման պատճառների և էլեկտրամատակարարմամբ ապահովելու ակնկալվող ժամկետների մասին մատակարարը պարտավոր է գրավոր տեղեկացնել Դիմող անձին՝ խախտման պատճառներն ի հայտ գալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:».

2) Կանոնների 13.7 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13.7. 6 (10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում նոր միացվող կամ վերակառուցվող սպառման համակարգը լարման տակ դնելու համար Դիմող անձը մատակարարին է ներկայացնում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը):».

- 3) Կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.7.3 կետով.
 «13.7.3. 13.7.2 կետով նախատեսված դիմումը ստանալուց հետո մատակարարը Դիմող անձին ներկայացնում է էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկ՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:».
- 4) Կանոնների 46-րդ կետի «դ» ենթակետում «արժեքը (արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը),» բառերից հետո լրացնել «նախորդ տարվա նույն ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակը (արտահայտված կիլովատտ ժամերով, իսկ էլեկտրոնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով սպառված էլեկտրաէներգիայի քանակը),» բառերով.
- 5) Կանոնների 46-րդ կետի «դ» և «ե» ենթակետերում, 11-րդ գլխի վերնագրում, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 59.2-րդ, 59.3-րդ, 59.4-րդ, 65.2-րդ կետերում և 77-րդ կետի «զ» ենթակետում «վճարման փաստաթուղթ» բառերը և դրանց բոլոր հոլովաձևերը, ինչպես նաև Կանոնների 79-րդ կետում «վճարման հաշվում» բառերը փոխարինել «հաշվարկային փաստաթուղթ» բառերով.
- 6) Կանոնների 57-րդ կետում «խախտման դեպքում առևտրային հաշվառքի» բառերից հետո լրացնել «սարքի» բառը.
- 7) Կանոնների 58-րդ կետի 2.1 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 «2.1) առկա չէ վերստուգիչ հաշվառքի սարք, առևտրային հաշվիչի ստուգաչափման արդյունքում հնարավոր չի եղել արտածել էլեկտրոնային հաշվիչի հիշողության տվյալները, սակայն սպառողին ամրակցված առևտրային հաշվիչը ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում և սպառողին մշտադիտարկման նպատակով տրվել է ավտոմատացված համակարգի հիշողության մուտքի իրավունք կամ սպառողը օրենքով սահմանված կարգով իրազեկվել է այդ իրավունքի վերաբերյալ, ապա վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{էք}} = (S_{\text{օր1}} * U_{\text{օձ1}} + S_{\text{օր2}} * U_{\text{օձ2}}) - ZU_{\text{էք1}},$$

որտեղ՝

$S_{\text{օր1}}$ -ը առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածում աշխատանքային օրերի թիվն է,

Մ_{օժ1}-ը առևտրային հաշվիչի խախտմանը նախորդող 5 աշխատանքային օրերի միջին օրական ծախսն է,

Տ_{օր2}-ը առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածում ոչ աշխատանքային օրերի թիվն է,

Մ_{օժ2}-ը առևտրային հաշվիչի խախտմանը նախորդող 2 ոչ աշխատանքային օրերի միջին օրական ծախսն է,

ՀՄ_{ԷՊ1} -ն հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածում առևտրային հաշվիչի ցուցմունքներով գրանցված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտ·ժ), իսկ ենթասպառողների առկայության դեպքում՝ հաշվառված էլեկտրաէներգիայի քանակի՝ սպառողին վերագրված մասն է:

Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակը դրական արժեքի դեպքում գումարվում, իսկ բացասական արժեքի դեպքում հանվում է հաշվիչով գրանցված էլեկտրաէներգիայի քանակից: Առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածը՝ 20 օրը գերազանցելու դեպքում վերահաշվարկն իրականացվում է խախտման հայտնաբերման օրվանից 20 օրվա համար.».

8) Կանոնների 58-րդ կետի 4-րդ ենթակետում՝

ա. «փորձագիտական եզրակացությամբ» բառերից հետո լրացնել «արձանագրվել է փորձաքննության ենթակա չլինելու հանգամանքը կամ» բառերը.

բ. Նախավերջին պարբերությունը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

«ՆՄ_{օժ}-ն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող տարվա նույն ամսվա միջին օրական ծախսը բազմապատկած խախտմանը նախորդող երեք ամիսների ծախսի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսի քանորդով: Եթե խախտմանը նախորդող երեք ամիսներին և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի որևէ ամսում սպառողը ծախս չի ունեցել, ապա ՆՄ_{օժ}-ն ընդունվում է հավասար առևտրային հաշվառքի սարքի խախտմանը նախորդող տարվա նույն ամսվա միջին օրական ծախսին: Եթե նախորդ տարվա նույն ամսվա ընթացքում սպառողը ծախս չի ունեցել, ապա միջին օրական ծախսն ընդունվում է հավասար առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա սպառողի միջին օրական ծախսին.».

9) Կանոնների 59.4 կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մատակարարը պարտավոր է վերահաշվարկին առնչվող ողջ տեղեկատվությունը գրավոր ներկայացնել սպառողին՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ քան 35 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վերահաշվարկը կատարվել է Կանոնների 58-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն և միջին օրական ծախսը որոշվել է առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա համար: Նման դեպքերում մատակարարը պարտավոր է վերահաշվարկին վերաբերող ողջ տեղեկատվությունը գրավոր ներկայացնել սպառողին՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ քան 60 աշխատանքային օրվա ընթացքում:».

10) Կանոնների 59-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) լարման տրանսֆորմատորի խափանման պատճառով սխալ է գրանցել սպառված էլեկտրաէներգիայի քանակը, սակայն սպառողին ամրակցված առևտրային հաշվիչը ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում և սպառողին մշտադիտարկման նպատակով տրվել է ավտոմատացված համակարգի հիշողության մուտքի իրավունք կամ սպառողը օրենքով սահմանված կարգով իրազեկվել է այդ իրավունքի վերաբերյալ, ապա վերահաշվարկը կատարվում է սույն Կանոնների 58-րդ կետի 2.1-րդ ենթակետի համաձայն: Այն դեպքերում, երբ առևտրային հաշվիչը ներառված չէ էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում՝ վերահաշվարկը կատարվում է սույն Կանոնների 58-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն.».

11) Կանոնների 69-րդ կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և մատակարարի միջև փոխհոսքերի իրականացման նպատակով միաֆազ հաշվիչը դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային միաֆազ հաշվիչով փոխարինելու համար՝ 11 000 (տասնմեկ հազար) դրամ, իսկ եռաֆազ հաշվիչը դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային եռաֆազ հաշվիչով փոխարինելու համար՝ 55 000 (հիսունհինգ հազար) դրամ.».

12) Կանոնների 83-րդ կետից հանել 5-րդ և 6-րդ նախադասությունները.

13) Կանոնների 4-րդ հավելվածի՝ էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջվող իրավիճակներում մատակարարի կողմից իրականացվող գործողությունների ծրագրերի մշակման կարգի՝ ա. 2-րդ կետում «**սնող գծի անջատում**» բառերից առաջ լրացնել «4)» թիվը, իսկ «**սնող կենտրոն**» բառերից առաջ «4)» թիվը փոխարինել «5)» թվով, բ. 8-րդ և 11-րդ կետերի 1-ին ենթակետերում «2.2 կետի «ա» ենթակետում» բառերը փոխարինել «5-րդ կետի 1-ին ենթակետում» բառերով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
.... հոկտեմբերի 2017թ.